



Կը փափաքի՞ք մեզի հետ գործակցիլ

Թոյլ տուէք մեզի օգնել ձեզի՝ ձեր տեղական համայնքին մէջ փոփոխութիւն մը յառաջացնելու, մինչ միասին կ'աշխատինք հասնելու այնպիսի Բալիֆորնիոյ մը, ուր արգելքներ չկան: CCDA-ն ցանցին մէջ գտնուող իր բոլոր ռազմավարական գործընկերներուն հաւաքական ջանքերը կ'օգտագործէ՝ բոլորին համար մատչելիութեան արդիւնաւետ խթանումը ապահովելու նպատակով:



**Ձեր կազմակերպութիւնը
ունէ՞ միեւնոյն**

**նպատակներ, որոնց շուրջ
կարելի է միաւորուիլ:**

**Այսօր իսկ կապ
հաստատեցէ՛ք մեզի հետ:**

**Կապ հաստատեցէ՛ք
մեզի հետ:**

☎ (916) 319-9974
📍 400 R Street,
Գրասենեակ 310
Sacramento, CA 95811

✉ ccda@dgs.ca.gov
🌐 www.dgs.ca.gov/CCDA



*Մատչելի եւ արգելքներէ զերծ
Բալիֆորնիա*

Ներառականութիւն եւ հաւասար
հնարաւորութիւններ՝ բոլորին համար:



Մեր առաքելութիւնը:

Կրթութեան, երկխօսութեան եւ շահագրգիռ կողմերու հետ համագործակցութեան միջոցով Զաւիֆորնիոյ ամբողջ տարածքին հաշմանդամութիւն ունեցող անձերու մատչելիութիւնը խթանել:

Մեր մասին:

2009-ին հիմնուած՝ Զաւիֆորնիոյ Հաշմանդամութեան Մատչելիութեան Յանձնաժողովը (CCDA) կը ծառայէ հանրութեան որպէս տեղեկատուական աղբիւր եւ որպէս հետազոտական բաժին՝ հաւաքելով եւ վերլուծելով Զաւիֆորնիոյ մէջ գործող ձեռնարկատիրական վայրերու ֆիզիքական մատչելիութեան եւ կայքէջերու մատչելիութեան ենթադրեալ բոլոր խախտումներուն վերաբերող իրաւական բողոքները:

Որո՞նց կը ծառայենք:



CCDA-ն կը ծառայէ հաշմանդամութիւն ունեցող անձերու համայնքին, գործարարներուն, շինարարութեան մասնագէտներուն, իրաւական համայնքին եւ տեղական ինքնակառավարման մարմիններուն:

Մենք կը հաւատանք, որ մեր ծառայած անձերուն եւ կազմակերպութիւններուն հետ միասին աշխատելով՝ կրնանք նուազեցնել գործարարներու կողմէ մատչելիութեան պահանջներու խախտումները՝ տրամադրելով անհրաժեշտ միջոցներ եւ գործիքներ:

Ի՞նչ կը կատարենք:



Մենք կը հաւաքենք մատչելիութեան խախտումներու վերաբերեալ տուեալներ՝ հանրութեան համար կրթական իրազեկման հնարաւորութիւնները որոշելու նպատակով, եւ կը մշակենք մատչելիութեան գործիքներ, որոնք գործարարները, շինարարութեան մասնագէտները եւ շահագրգիռ կողմերը կրնան օգտագործել:

Մենք կը համակարգենք նահանգային եւ տեղական ինքնակառավարման մարմիններուն հետ՝ մատչելիութեան ծրագիրներ իրականացնելու նպատակով, որպէսզի իրենց համայնքներուն մէջ գտնուող գործարար վայրերու մատչելիութեան խոչընդոտները նուազեցնենք:

Մասնակցեցէ՛ք:



CCDA-ն կանոնաւոր կերպով կը կազմակերպէ մատչելի հանրային ժողովներ, համաժողովներ եւ իրազեկման միջոցառումներ: Մասնակցեցէ՛ք մեր հանրային միջոցառումներէն մէկուն՝ մեր վեբքին գործունեութիւններուն մասին տեղեկանալու համար: